

ԳՐԱԿԱՆ

ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆ

ԿԱԹՈՒԼ ՄԸ ԻՒՂ Ս. ՄԵՍՐՈՊԷՆ

Գեղացի տղայ մըն է, պեխերը հազիւ մրոտած: Հայրենի գեղը ծրարած իր սրտին մէջ՝ քառսուն օր ճամբորդելով՝ եկեր հասեր է ահա մինչեւ դուռները Ամերիկայի - իր երազած աշխարհին: Ծովի երկար ու ալեկոծ ճամբուն վրայ՝ հիւանդացիներ է քիչ մը, եւ այդ դուռներուն առջեւ իսկ վար դրեր են զինք, լման ութն օր պահելով հիւանդանոցի մը ճերմակ առիքին տակ, Նիւ Եորքի Նաւահանգիստը, էլիս Այլէնտ կղզիին վրայ:

Եւ հիմա, երկու օրէ ի վեր կը սպասէ հոգ, ներգաղթի շէնքին մէկ անկիւնը: Սպասման սրահ մըն է տեղը, ուր խճողուած են հարիւրաւոր գաղթականներ: Բոլորն ալ կը սպասեն մուտքի քննութեան որ կրնայ զիրենք ընդունիլ Ամերիկայէն ներս. կամ, եթէ չար է բախտերին, ետ ճամբել՝ առանց փողի, առանց թմբուկի - կոտրած սիրտերով ու խորտակուած յոյսերով:

Այս բազմութեան մէկ մասնիկն է Արմէն: Բայց ինչ բազմութիւն - կատարեալ Բաբելոն մը, որուն կենդանի բեկորները կու գան աշխարհի չորս կողմերէն, և ուր քիչեր միայն կը հասկնան զիրար: Ամերիկա ընդունուելու հոգը և սպասումին հասարակաց ծանրութիւնը իրարու քով բերեր է զանոնք և մեր Արմէնն իսկ եղբայրացուցեր է իտալացիի մը որ սեւ ու երկար պեխեր ունի, ածխագոյն և կրակոտ աչքեր և շունչ մը որ սխտոր կը բուրէ. և կամ՝ Լեհացիի մը, որուն կապոյտ աչքերը կը լողան գիրուկ կապիճներու մէջէն, կարմրուկ երեսի մը վրայ: Բոլորն ալ թառած են իրենց ծրարներուն կամ պայուսակներուն գազաթը: Կը խոսին իրարու հետ, պատահաբար, եթէ նոյն ազգէն են կամ նոյն երկրէն, և իրարու կը նային զարմանքով մը, որուն ետեւ հարցում մը կը գալարուի - արդեօք ո՞ր ազգէն, ո՞ր երկրէն կուգայ սա տղան, կամ սա մարդը - և ինչո՞ւ, ինչո՞ւ:

Դիմացի պատին փակցուած ժամացոյցը վայրկեաններն ու ժամերը կը տաշէ անօրինակ ծովութեամբ մը որ սիրտ կը հատցնէ: Արմէն կը զգայ իր գեղացիի հոգիին ծալքը, թէ ժամանակը միշտ ալ միեւնոյն թափով, միեւնոյն արագութեամբ չի շարժիր ամէն տեղ ու ամէն պահ: Որքան կամաց կ'երթայ հիմա, և որքան ծանր են սլաքները երբ անձկագին սպասում մըն է զոր կ'ապրի մարդ, անծանօթ ափերու վրայ: Իսկ որքան արագ կը փախին վայրկեանները, նոյն իսկ ժամերը, երբ քաղցր են ապրուած պահերը, մանկութեան պահերուն նման:

Եւ պայուսակին վրայ նստած՝ կը սպասէ Արմէն: Լման ցորեկ մը և գիշեր մը անցեր են արդէն, միեւնոյն սպասումով որ սիրտ կը մաշեցնէ ու կարծես չունի վերջ ու վախճան: Ըսած են իրեն թէ յաջորդ առտուն իրն է կարգը քննութեան: Եւ ասիկա վերջին գիշերն է: Նստած տեղը կ'ուզէ փակել աչքերը քունի մը հանգիստին ի խնդիր. բայց քունը հեռու կը փախի աչքերէն, մինչ ուրիշներ կը քնանան իր շուրջը. կը քնանան - խըռ խըռ, սղոցելով գիշերուան ժամերը և զանոնք մէկդի նետելով:

Լուռ է սրահը. մէկ անկիւնը, դրան մօտերը, էլեքտրական լամպար մը կը վառի անթարթ:

Դուրսէն կը լսուի հովին ու անձրեւին խեղդուած ձայնը որ կը փշրուի գոց պատուհաններուն դէմ ու կը մաղուի մուռ ջուրերուն վրայ: Եւ կը լսուի կոտորուած սուլոցը նաւերուն որ կը սողան մօտակայ ջուրերուն վրայ: Երբեմն՝ սուր ու կտրուկ է այդ սուլոցը, երբեմն ալ՝ երկար ու պաղատագին:

Եւ պահ մը իր դրացիները մոռցած, մոռցած իր նստած տեղն իսկ, կը մտածէ Արմէն: Կարօտին ալիքն է որ կ'ուսի, կը բարձրանայ կուրծքին տակ, հայրենի տան կարօտին, որ կը կոտտայ, քառսուն օրէ ի վեր: Աչքերը գոց՝ կը տեսնէ ահա Պապան, իր հայրը, որ արցունքը զսպած՝ կը խօսի իրեն, հանդարտ բայց ամուր ձայնով մը - Գնա՛, դուն մարդ կ'ըլլաս Ամերիկայի մէջ: Յետոյ կը տեսնէ պզտիկ եղբայրը, Յակոբը, որ զինք կը համբուրէ ու կ'արտասուէ անձայն: Եւ վերջապէս կը տեսնէ մայրը, որ լացեր է գիշերն ամբողջ և հիմա հազիւ կը մըմնջէ - Ո՛ր կը թռիս, ո՛ր կ'երթաս թեւիս տակէն, ձագուկս, ո՛ր: Եւ մայրը նուաղած կ'իյնայ թեւերուն վրայ ազգականներուն որ իր քովն են, արցունքոտ աչքերով:

Արմէնին աչքերը գոց են դեռ: Կը տեսնէ մայրը որ կը հեռանայ, ազգականներուն թեւն ինկած, և կսկիծէն ինք իր վրայ կքած, ծալուած գրեթէ - Ո՛ր, ձագուկս, ո՛ր:

Կուտակուած արցունքը կը քամուի գոց կոպերուն արանքէն...: Կարօտին ալիքը կ'իջնէ, կը հանդարտի կամաց կամաց: Անկիւնի լամբարը, դրան մօտէն, նոր երկրի մը մէջ, նոր ու թերեւս արեւոտ օրերու խոստումովը կը դողայ: Ժամացոյցին սլաքները քանի մը անգամ կ'ընեն իրենց շրջանը, և ահա կը բացուի առաւօտը, բարի մօր մը աչքերուն պէս:

Նախաճաշի զանգակը կը հնչէ: Գաղթականներու Բաբելոնը կը վիստայ: Որչափ անուշ է բուրումը եռացող սուրճին և հացի թարմ գնտիկներուն որ դիզուած են երկար սեղաններուն վրայ, տեղ-տեղ, և որչափ հրապուրիչ է տեսքը նոր տապկուած հաւկիթներուն, որոնց դեղնուցները, ոսկեղէն փոքրիկ կղզիներու նման, կլորուեր նստեր են փոքրիկ լիճերու ճերմակուցին մէջտեղը, խոշոր պնակներու վրայ: Դգալի, պատառաքաղի ձայներ կը զնգան ճաշարանին մէկ ծայրէն միւսը: Ախորժակները - գաղթականի ախորժակներ - սուր են ու անկուշտ:

Կէս ժամ կ'անցնի: Պնակները սրբուեր են արդէն և գաւաթները պարպուեր: Գաղթականներու բազմութիւնը գացեր լեցուցեր է նորէն՝ սպասման սրահը:

Ժամ մը յետոյ՝ Արմէն, պայուսակը ձեռքը, կանգնած է քննիչ պաշտօնեային առջեւ, ընդարձակ գրասենեակի մը մէջ:

Լուրջ է դէմքը քննիչին. երես մը, որ կարծես քանդակ մըն է քարեղէն - պաղ ու անժպիտ աչքերով: Պաղ է դէմքը հայ թարգմանին ալ, որ կանգնած է գրասենեակին մօտ: Տաք է միայն նայուածքը Արմէնի եղբօր, որ քիչ մը անդին, սենեակին պատին տակ կանգնած՝ իրեն կը սպասէ անհամբեր կարօտով, և կը խօսի կարծես, իր աչքերուն լեզուովը, որ պզտիկ եղբայր մը միայն կը հասկնայ - Մի վախնար, Արմէն, հոս եմ ես, քեզի հետ: Մի՛ վախնար:

Արմէն ակնթարթ մը կը մոռնայ քննիչն ու թարգմանը և իր ամբողջ հոգիովը կը փաթթուի իր եղբօր նայուածքին, որ ջերմութիւն է ամբողջ, սիրոյ և կարօտի ջերմութիւն: Այն այն եղբայրն է, իրմէն քիչ մը մեծ տարիքով, որ կանչեր է զինք Ամերիկա - Հոս եկուր, հոս աւելի բարձր դպրոցներ կան: Հոս եկո՛ւր: Եւ Արմէն վազեր եկեր է ահա:

Քննիչ պաշտօնեան՝ իրարու ետեւէ՝ կը հարցնէ գեղացի տղուն անունը, տարիքը, ծնած տեղը, և վերջապէս -

- Ինչո՞ւ կու գաս Ամերիկա:

- Դպրոց կ'ուզեմ երթալ, դպրոց...:

Պզտիկ, հազիւ նշմարելի ժպիտ մը կամաց կամաց կը ճեղքէ սառուցք քննիչի դէմքին, աչքերէն սկսելով ու տարածուելով ալիք-ալիք: Թարգմանին երեսն ալ կը

տաքնայ քիչ մը և կը շողայ թեթեւ ժպիտով մը:

- Բայց ինչպէս պիտի երթաս դպրոց, դրամ ունի՞ս:

- Գրպանս քսանըհինգ տոլար ունիմ միայն: Ու եղբայրս խոստացած է օգնել ինծի:

- Բայց եթէ եղբայրդ չկրնայ օգնել քեզի, ինչպէս պիտի կրնաս երթալ դպրոց:

Արմէնի գունտ երեսը կը տաքնայ յանկարծ ու կը կարմրի: Սիրտը կը վառի անօրինակ բոցով մը, կաթիլ մը իւղ ինկած է հոն կարծես - Կաթիլ մը օրհնուած իւղ իր հայրենի սիրական սուրբէն, Մեսրոպէն, և ամբողջ կորով կտրած, աչքերը կը վերցնէ ու մեղմ բայց հաստատ ձայնով մը կը պատասխանէ լեզուովը սուրբ Մեսրոպին.

- Ես Հայ եմ, տէր իմ, ես կը սիրեմ կրթութիւնը, ու չեմ վախնար աշխատանքէ: Եթէ պէտք ըլլայ՝ թէ կ'աշխատիմ և թէ դպրոց կ'երթամ: Ես դրամին համար չեմ գար Ամերիկա: Դպրոց երթալ կ'ուզեմ ես. դպրո՛ց, դպրո՛ց:

Հայերէն բառերու արձագանքը հազիւ մարած է սենեակին անկիւններէն և թարգմանութիւնը հազիւ աւարտած: Հրաշքով մը կարծես՝ քննիչին դէմքին սառուցը հալեր է բոլորովին՝ հայրական բարի ջերմութեան մը ներքնաբուխ հոսանքէն և աչքերը կը ճառագայթեն.

- Շա՛տ լաւ, տղաս, շա՛տ լաւ: Տուն գնա եղբորդ հետ: Եւ բարի յաջողութիւն քեզի:

Ու Արմէն, եղբորը ձեռքը բռնած, ժպիտը աչքերուն և ամբողջ արեւ մը սրտին՝ ազատ քայլերով ներս կը մտնէ Ամերիկայի շէմքէն:

Աշնան օր մըն է: Յուրտ մշուշ մը պատանքեր է նիւ Եորքի ծովափը, և բարակ, շատ բարակ անձրեւ մը կը մաղուի: Երբ ոտքը կը դնէ մեծ քաղաքին կարծր գետնին վրայ՝ Արմէն կը զգայ թէ իր տղու հոգիին, իր պանդուխտ հոգիին մէջ կը վառի դեռ կաթիլ մը իւղը իր հայրենի սուրբէն, Ս. Մեսրոպէն: Կաթիլ մը իւղ որ հատնում չունի և որուն լոյսը ստուեր չի ձգեր: Կաթիլ մը իւղ Ս. Մեսրոպէն...:

Նոյ. 1948

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Գրողին պայքարի զէնքը՝ գրականութիւնն է, որ ժողովուրդներու դաստիարակութեան միակ բեմն է, մարգարէական պատգամաբերն ու մարդասիրական գաղափարներու առաջատար մունետիկը:

Գրականութիւնը բարձր ու նուրբ արուեստով ըսուած անկեղծ խօսքն է, որ կը միտի բարձրացնել ու եղբայրացնել մարդիկը իրար հետ: Գրականութիւնը ինքնին ժողովուրդն է: Ժողովուրդի մը գրականութիւնը իր գերագոյն իղձերուն և ձգտումներուն, իր հաւատքին և անոր համար մղած խիզախումներուն գեղարուեստական պատումն է: